



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Հիմնուած 1930, Մարտ 1-ին



1 Մարտ, 1930

ԳԱՀԻՐԷ

ՄՆՊ

-ԳԱԶԻՐԷ-

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Հիմնուած 1930, Մարտ 1-ին



1 Մարտ, 1930

ԳԱԶԻՐԷ

1 Wurs, 1930

ԳՍՀԻԳ

# ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Հիմնուած 1930, Մաս 1-ին

Ա Ն Ո Ւ Ն

1.— Հայ Կարմիր Խաչը Եգիպտոսի մէջ կազմուած է միութեամբ Հայ Ազգային և Հայաստանի Կարմիր Խաչերու:

«Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչը պիտի ենթարկուի բոլոր Մեծ Պետութիւններէ *de facto* (իրապէս) և *de jure* (իրաւապէս) ընդունուած Հայ Պետութեան Կարմիր Խաչին: Մինչ այդ՝ Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչը իր միջոցներով և կազմակերպ կանոնադրին համաձայն, պիտի օժանդակէ ուր Հայ Կարիք կայ»:

Եգիպտոսի Հ. Կ. Խաչը կրնայ իր մասնաճիւղերն ունենալ բոլոր հաշտեցնակ վայրերու մէջ կամ գործակցութիւն հաստատել նման վայրերու մէջ արդէն գոյութիւն ունեցող մերազնեայ Կարմիր Խաչերու հետ:

Ն Պ Ա Տ Ա Կ

2.— Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչի նպատակն է, Եգիպտոսայ կեանքին մէջ իրականացնելու աշխատիլ՝ Հ. Կ. Խ.-ի սկզբունքներն ու ծրագիրը, զանոնք յարմարցնելով տեղական միջավայրի սոսանձնայատուկ պայմաններուն:

3.— Հայ Կարմիր Խաչի գործունէութեան ասպարէզն է.

Ա.— Պատերազմի, համաճարակներու եւ աղէտներու ժամանակ օգնել Հայ բանակներուն եւ Հայ ժողովուրդին, ամէն տեղ, դրամով, հագուստով, մթերքներով, բժշկական եւ առողջապահական այլ եւ այլ միջոցներով:

Բ.— Օգնել վիրաւոր զինուորներուն, սպաննուածներու ընտանիքներուն, եւ սատարել անոնց զաւակներու դաստիարակութեան:

Գ.— Պատրաստել հիւանդապահներ, շրջուն դարմանատուններ, դեղագործներ, ինչպէս նաև հրատարակել առողջապահական գրքոյկներ և տարածել զանոնք:

Դ.— Երկրաշարժէ, սովէ, հեղեղներէ եւ համաճարակ հիւանդութիւններէ տառապող Հայերու եւ անոնց կարօտ ընտանեաց նպաստներ տալ:

Ե.— Հիւանդութեանց բարձման աջակցիլ:

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

4.— Հ. Կ. Խաչը իր նպատակին գործադրութեանը համար՝ հասոյթի հետեւեալ աղբիւրները պիտի ունենայ.

Ա.— Մտաքի դրամ ,

Բ.— Անդամավճարներ ,

Գ.— Անհատական կտակներ և ամէն կարգի  
նուէրներ ,

Դ.— Հանդանակութիւններ , վիճակահանութիւն-  
ներ , պաշարներ , հանդէսներ , ներկայացումներ  
եւ այլն :



## Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

5. — Ամէն Հայ, առանց կրօնքի, սեռի եւ քաղաքական դաւանանքի խորութեան, կրնայ անգամակցիլ Հայ Կարմիր Սաչի եղիւպոսոսի Մարմնին, երբ կ'ընդունի անոր ծրագիրն ու կ'ենթարկուի կանոնադրի տրամադրութիւններուն:

ՄԱՆՕԹ. — Անչափահաս անդամներ, 18 տարեկանէն վար, բռնի իրաւունք չունին:

6. — Հ. Կ. Սաչի անդամներ կը բաժնուին երեք կարգի, Ա. Գործօն, Բ. Պատուոյ, Գ. Օժանդակ անդամներ:

Ա. Գործօն անդամ կը նկատուին անոնք, որոնք ուխտ ընելէ զատ, ամէն տարի կանոնաւորապէս ամսական առնուադն 5 Կ. դ. անդամատուրք կը վճարեն:

Գործօն անդամներն առանց սեռի խորութեան, յարգելով կանոնադրի տրամադրութիւնները, կը վաշելեն ընտրելու եւ ընտրուելու իրաւունք:

Բ. Պատուոյ անդամ կը համարուին անոնք՝ որոնք բարոյական եւ նիւթական մեծամեծ զոհողութիւններով կամ մասնակի մեծ գումարներով եւ ար-

ժէքաւոր իրեղէններով նպատած են ընկերութեանս :

Պատուոյ անդամի տիրուցոս ունէ անձի կը տրբուի Եգիպտոսի Հ. Կ. Խ. ի Պատու. ժողովէն և կամ անկէ ընտրուած Կեդրոնական Վարչութիւնէն :

Գ. Օժանդակ անդամ կը կոչուին անոնք՝ որոնք, առանց սեռի խտրութեան, ընկերութեանս նպատակին համար բարոյական աջակցութիւններ ընելէ դատ՝ յօժարակամ նուէրներով կամ դէժ տարեկան 30 և. դ. վճարելով կը նպատուեն գործին :

ԾԱՆՅԹ.— Պատուոյ եւ Օժանդակ անդամներ անդամական ժողովներու եւ Բուէի քեւ չեն կրնար մասնակցիլ, բայց կրնան առանց Բուէի իրաւունքի, ներկայ ըլլալ Հ. Կ. Խաչի այն ժողովներուն, որ նիւթական, սննտական եւ բարոյական հաշուե՝ տուքիւն կը կատարուի եւ որոնց մասին կանխաւ իրենց նամակաւ կամ ծանուցմամբ իմաց տրուած է :

#### Կ Ա Ձ Մ

7.— Առնուազն 5 անդամներ կրնան կազմել Հ. Կ. Խ. ի Մասնաճիւղ մը, որ կը վաւերացուի Կեդր. Վարչութեան կողմէ :

8.— Ամէն Մասնաճիւղ կ'ունենայ իր վարչութիւնը, երեքէն հինգ անդամներէ, նայելով իր անդամներու թուին :

9.— Վարչութիւնը կ'ընտրուի անդամական ժողովին մէջ, ձայներու մեծամասնութեամբ, զազանի քուէով եւ վեց ամսուան կամ մէկ տարուան համար, պայմանաւ որ ժողովին ներկայ ըլլան անդամներու մեծամասնութիւնը եւ ընտրութեան մասին

կանխաւ լուր տրուած ըլլայ թողոր անդամներուն :

Յաջորդաբար երեք անգամ հրաւիրուած ժողովը եթէ կանոնադրով պահանջուած մեծամասնութիւնը չունենայ, ներկաներու թիւը իբր այդ կը նկատուի և անոնց քուէով կ'ընտրուի վարչութիւնը :

ԾԱՆՕԹ.— Վարչութեան անդամները վերմսրելի են :

10.— Նկատի ունենալով որ Հ. Կ. Սաչք աւելի կանացի կազմակերպութիւն մ'է, վարչական անդամներու երկու-երրորդը պէտք է բաղկանայ տիկիններէ և օրիորդներէ :

1.— Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր գիւանը—ատենապետ, ատենադպիր և զանձապահ, և կամ անոնք զատ-զատ կ'ընտրուին անդամական ընտրական ժողովին մէջ : Վարչութիւնը հաւաքաբար պատասխանատու է Մասնաճիւղին գործունէութիւններուն համար :

12.— Ընտրութեան արդիւնքը անմիջապէս կը տեղեկագրուի Կեդր. Վարչութեան :

13.— Մասնաճիւղերու վարչութիւնները պարտաւոր են ամէն 6 ամիս իրենց հաշուեկէշիւրը և գործունէութեան տեղեկագիրը զրկել Կեդր. Վարչութեան :

14.— Մասնաճիւղերը պէտք է անուղղակիօրէն ջանան սերտ յարաբերութիւն պահել Եգիպտոսի Կարմիր Մահիկի և Կարմիր Սաչի տեղական մարմիններուն հետ և օգտուիլ անոնց ընձեռած օժանդակութիւններէն :

15.— Մասնաճիւղերը որեւէ ձեռնարկի մասին նախօրօք տեղեկացնելու են Կեդր. Վարչութեան և ստանալու են անոր հաւանութիւնը :

16.— Մեծ ձեռնարկներու շուրջ ժօտաւոր վայրերու Մասնաճիւղերք կրնան դործակցիլ:

17.— Ամէն անգամ իր տեղի Մասնաճիւղին մասնակցելու է: Երբ անգամ մը բանաւոր պատճառունի իր տեղի Մասնաճիւղին չպատկանելու, ուրիշ Մասնաճիւղի մը անդամակցելու համար պէտք է ստանայ իր տեղի Մասնաճիւղին, կամ՝ զժուարուութեան պարագային, կեդր. վարչութեան հաւանութիւնը:

18.— Իրաւասու անգամ կը կոչուին անոնք, որոնք.

Ա.— Ամբաստանութեան տակ չեն գտնուիր:

Բ.— Ժողովներուն կանոնաւորապէս ներկայ գրուելու ան (բացակայութեան բանաւոր պատճառները յարգելով):

Գ.— Տուրքերը ամբողջապէս վճարած են:

ԾԱՆՅԹ.— Իրաւասու անդամները միայն կրնան պատճօնի կոչուիլ.— վարչութեան անդամ, պատգամաւոր, դատաւոր, եւայլն:

Առանց բանաւոր պատճառի մէկ տարւան ընթացքի յաջորդաբար ուր անգամ ժողովէ բացակայողները կը դադրին անդամ ըլլալէ եւ կը նկատուին իբր օժանդակ անդամ:

19.— Մասնաճիւղը պարտաւոր է առնուազն տմիսը անգամ մը անդամական ժողով գումարել: Ժողովը օրինական կը համարուի, երբ անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է, չհաշուելով բանաւոր պատճառով բացակայողները:

20.— Մասնաճիւղի ժողովին կրնայ ներկայ գրուել ուրիշ Մասնաճիւղի պատկանող անգամ մը իբրիւ հիւր, եթէ ժողովը կ'արտօնէ:

21.— Երբ Մասնաճիւղ մը մերժէ յանձնարարել

իր անդամներէն մին ուրիշ Մասնաճիւղի մը, իր պատճառաբանութիւնները պարտի ներկայացնել կեզ։ Վարչութեան, այդ մասին տեղեկացնելով նաև պատահան Մասնաճիւղին։

22.— Մասնաճիւղը իր յանձնարարականներուն մէջ միշտ յիշատակելու է թէ յանձնարարուած անգամը իր պարտքերուն (ո՞րքանը վճարած է և ո՞րքանը սպառիկ թողած)։

23.— Մասնաճիւղը պարտաւոր է իր մէջէն արտաքրուած կամ սեւէ պատճառով հեռացած անդամին անունը անմիջապէս հաղորդել կեզր. Վարչութեան։

24.— Մասնաճիւղը ջանալու է ըստ կարելոյն յաճախ գումարել համակրական և հրապարակային ժողովներ։ Հրապարակային ժողովներուն տեղական ուժերէ գուրս ատենախօսները կը հրաւիրուին կեզր. Վարչութեան միջոցաւ, և ճանապարհածախսը կը վճարուի կեզրոնական գանձէն։

25.— Մասնաճիւղ մը հաւաքաբար պատասխանատու է իր գանձին և գոյքին համար։

26.— Մասնաճիւղը պարտաւոր է իր գանձին մէջ հաւաքուած գրանիները զրկել երեք ամիս անգամ մը կեզր. Վարչութեան, պահելով միայն 20 առ հարիւրը իր տեղական գուտ կազմակերպական ընթացիկ ծախսներուն համար։

27.— Պատգամաւորական ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ Մասնաճիւղը պարտաւոր է վըճարած ըլլալ իր բոլոր տուրքերը և հաշիւները մահրամաններէն ներկայացուցած՝ կեզր. Վարչութեան։

28.— Վարչութիւնը յարաբերութեան պաշտօնական կապն է իր մէկ անդամին և ուրիշ մարմիններու միջեւ։

**ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԹԻՆԻ ԻՐԱԻԱՍՈՒԹԻՒՆԸ**

29.— Վարչական մարմինը կ'ստանայ և կը բանայ Մասնաճիւղին անունով եկած նամակները, կը ներկայացնէ Մասնաճիւղի յաջորդ ժողովին և կը վարէ Մասնաճիւղին ընթացիկ գործերը:

ԾԱՆՅԹ.— Մասնաճիւղին ուղղուած ամեն պատճենական գրութիւն անդամական ժողովի մէջ կը կարդացուի եւ ապա պան կը դուրի Մասնաճիւղի ասե՛նադպիրին փոխ:

30.— Ստիպողական պարագաներու մէջ միայն երբ հնարաւոր չէ անդամական ժողով պումարել, վարչական մարմինը պէտք է սնօրինութիւն մ'ընէ և ներկայացնէ զայն Մասնաճիւղի յառաջիկայ ժողովին վաւերացնելու համար:

31.— Վարչական մարմնի անդամ, պատգամաւոր, գատաւոր եւայլն, կրնան ըլլալ միայն այն անդամները, որոնք գէթ վեց ամիս գտնուած են անընդհատ Հ. Կ. Խ.ի տեղական Մասնաճիւղին մէջ և իրաւասու են յօդուած 19ի համաձայն:

ԾԱՆՅԹ.— Բացառութիւն կը կազմեն նորակազմ Մասնաճիւղերը:

32.— Կեդր. Վարչութեան անդամ մը, ինչպէս նաեւ գործիչ ընկերուհի մը թեկնածու նկատուելու չեն վարչական մարմնի և պատգամաւոր ընտրուելու:

33.— Եթէ վարչական մարմինը անհող, թոյլ և պարտազանց գտնուի և այդ պարագան հաստատուի, Մասնաճիւղը կրնայ լուծել զայն մեծամասնութեամբ պաշտօնավարութեան շրջանի լրացումէն առաջ եւ նոր մը ընտրել:

34. — Ատենապետին պարտականութիւնն է Մասնաճիւղը ժողովի հրաւիրել, հոկել անոր կարգապահութեան և ատենադպրին հետ ստորագրել պաշտօնական թուղթերը: Մասնաճիւղին կնիքը կը պահուի ատենապետին քով:

35. — Ատենադպիրը կը կատարէ Մասնաճիւղին բոլոր գրաւոր դործերը, գանձայինէն զատ, և պատասխանատու է Մասնաճիւղի բոլոր թղթերու անվըթար պահպանումին: Ատենադպիրը առնուազն օտեննալու է երկու տոմարներ, առաջինին մէջ համառօտիւ արձանագրելու համար Մասնաճիւղի ժողովներու ատենագրութիւնները, երկրորդին մէջ՝ Մասնաճիւղի անդամներուն անունները:

Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրուին անդամներու մասին ծանօթութիւններ (մահ, տեղափոխում, հեռացում, արտաքսում եւն. եւն.):

36. — Գանձապահին պարտականութիւնն է.

Ա. Ստանալ և պահել Մասնաճիւղի անունով գրկուած կամ գանձուած բոլոր գումարները:

Բ. — Կատարել Մասնաճիւղի որոշած ծախսերը,

Գ. Ունենալ արկղի տոմար մը, ուր մանրամասնօրէն նշանակելու է Մասնաճիւղի ելքը և մուտքը (հրապարակով կատարուած հանգանակութեան գումարները առանձին արձանագրելու է տոմարին մէջ):

Դ. Ամէն երեք ամիս Մասնաճիւղին ելեւմտական հաշիւը ներկայացնել անդամական ժողովին:

Ե. Վարչութեան որոշումով ընթացիկ ծախքերու համար արտօնուած գումարը վար զնկելով, գանձին մէջ մնացած գրամը զբկել կնիք. Վարչութեան ամէն երեք ամիսը անգամ մը:

37.— Մասնաճիւղի թղթակցութիւնները կը կատարուին պարսօնական քրքի վրայ, որ կը հայթայթուի Կեդր. Վարչութեան կողմէ, և կը ստորագրուին ստենագրօսին և ստենագրօսին կողմէ: Գանձային հաշիւները ստորագրելու է նաեւ գանձագետը:

ԾԱՆՈՅԹ.— Հասարակ բուլքի վրայ եւ կեղծ անուններով ստորագրուած գումարները կը նկատուին անվաւեր:

38.— Մասնաճիւղի ստացած բոլոր նամակները, չգործածուած անդամատետրերը և գրոշմները, ամէն տարեշրջանի վերջը Պատգամաւորական Ժողովի գումարումէն ամիս մ'առաջ կը զրկուին Կեդր. Վարչութեան:

#### ԳՈՐԾԻՉՆԵՐ

39.— Գործիչ կը ճանչցուին այն անդամները, որոնք Պատգմ. Ժողովէն կամ անոր անուամբ Կեդր. Վարչութեան կողմէ կը հրաւիրուին աջակցելու Երիզատարի Հ. Կ. Խ.-ի տարածման:

#### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

40.— Հ. Կ. Խ.-ի Երիզատարի Կեդր. Վարչութիւնը կը ներկայացնէ Երիզատարի Հ. Կ. Խ.-ի մասնաճիւղերու գործադիր իշխանութիւնը:

Ան է Երիզատարի Հ. Կ. Խ.-ի պաշտօնական ներ-

կայացուցիչը թէ՛ երկրի և թէ՛ արտասահմանի Հ-  
Կ. Խ.-ի մարմիններու, ինչպէս նաև Հայ և օտար  
կազմակերպութիւններու առջև: Անոր միջոցաւ մի-  
այն կրնան կատարուիլ մասնաճիւղերու ըստը պաշ-  
տօնական յարաբերութիւնները վերը յիշուած մար-  
միններուն հետ:

41. — Կեզը. Վարչութեան պարտականութիւն-  
ներն են.

Ա. Գործադրել Հ. Կ. Խ.-ի եղբայրասօսի Պատգա-  
մաւորական ժողովի որոշումները.

Բ. Նոր մասնաճիւղեր կազմակերպելու հետա-  
մուտ ըլլալ.

Գ. Մզում տալ մասնաճիւղերու գործունէու-  
թեան և քննել անոնց հաշիւները.

Դ. Հրապարակային ժողովներու համար տտեհա-  
խօսներ պատրաստել.

Ե. Հետամուտ ըլլալ, որ մասնաճիւղերու մէջ  
ծագած սեւէ խնդիր օրինակաւ ճամբով լուծու-  
մ գտնէ.

Զ. Երջարերականով հազարգել մասնաճիւղերու  
կազմակերպութեան գործունէութեան վայրերէն ըս-  
տացուած լուրերը.

Է. Մասնաճիւղերէն պահանջել եռամսեայ հաշ-  
ուեկշիռ և տեղեկագիր, այդ մասին պատրաստուած  
մասնաւոր հարցարաններու միջոցով.

Ը. Իւտաքանչիւր եռամսեայի տեղեկագիրը ամ-  
փոփելով հազարգել մասնաճիւղերուն:

42. — Կեզը. Վարչութիւնը կազմակերպական  
սեւէ կարեւոր խնդրի առթիւ, խորհրդակցութեան  
կրնայ հրաւիրել կարող ընկերներ և ընկերուհիներ,

երբ հարցի մը մասին կեդր. Վարչութիւնը չի կրնար երկու-երրորդով որոշում տալ և փոքրամասնութիւնը կը պահանջէ խորհրդակցական ժողով :

43. — Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ եօթը անդամներէ, որոնք կ'ընտրուին Պատգմ. Ժողովին կողմէ, մէկ տարուան պաշտօնավարութեան շրջանով և վերընտրելի են :

44. — Կեդր. Վարչութեան ընտրելի կրնան ըլլալ այն անդամները, որոնք ընտրութեան օրէն ստուազն մէկ տարի շարունակ գտնուած են Կարմիր Խաչի մէջ և իրաւասու են :

45. — Կեդր. Վարչութեան ընտրելի չեն կրնար ըլլալ :

Ա. Կազմակերպական դատական ամբաստանութեան տակ պանուող անդամները .

Բ. Արտաքսուած և վերստին ընդունուած անդամ մը, եթէ միայն ձեռնհաս ատեննի մը կողմէ իսպառ անպարս յայտարարուած չըլլայ :

46. — Եթէ Կեդր. Վարչութեան մէկ կամ աւելի անդամները պակսին, Պատգմ. Ժողովին ցանկէն յաջորդական առաւելագոյն քուէ ստացողներ կը հրաւիրուին մասնակցելու կազմին. բացառիկ պայմաններու մէջ միայն, Կեդր. Վարչութիւնը մասնաձիւղերուն կը ղրկէ եռանուն ցանկ մը, պակսած անդամի ընտրութեան համար :

47. — Եթէ Կեդր. Վարչութեան անդամներու թիւին կէսէն աւելին պակսի, արձակարգ Պատգ. Ժողով կը գումարուի նոր ընտրութիւն կատարելու համար :

48. — Կեդր. Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր զիւանը, որ կը բաղկանայ ատենապետէ, ատենադպիրէ և գանձապահէ, որոնք անգամուհիներ լինելու են :

49. — Ատենապետին պարտականութիւնը .

Ա. Ատենապետել կեզր. Վարչութեան ժողովներուն:

Բ. Ատենապարին հետ խորհրդակցելով հոգա-  
ծու ըլլալ, որ կեզր. Վարչութեան որոշումները ան-  
թիերի եւ անյապազ գործադրուին:

Գ. Ատենապարին հետ բանալ եւ կարգալ կեզր.  
Վարչութեան նամակները:

Դ. Պահել կեզր. Վարչութեան Հայերէն եւ Անգ-  
լիերէն կնիքները եւ ստորագրել ու կնքել ատե-  
նապարին եւ ի հարկին գանձապահին հետ պաշտօ-  
նական բոլոր թուղթերուն տակ:

50. — Ատենապարին պարտականութիւններն են.

Ա. կեզր. Վարչութեան ժողովներուն համառօտ  
ատենադրութիւնը արձանագրել յատուկ տոմարի մը  
մէջ, ստորագրել բոլոր պաշտօնական գրութիւններն  
Ատենապետին հետ:

Բ. կեզր. Վարչութեան եկամտ բոլոր գրութիւն-  
ները բանալ եւ հաշորդել միւս անդամակիցներուն՝  
անոնց կարծիքները խնդրելով:

Գ. ինամով պահել կեզր. Վարչութեան անու-  
նով իրենց յանձնուած բոլոր գրութիւնները Պատգմ.  
ժողովին ներկայացնելու համար:

Դ. Բանձապահին ընկալագրերը եւ անոր հա-  
սած գրամական գումարները արձանագրել մասնա-  
ւոր տոմարի մը մէջ:

Ե. Պատրաստել Պատգմ. ժողովին ներկայաց-  
ուելիք տարեկան մանրամասն տեղեկագիրը:

Զ. կազմել եւ պահել կեզր. Վարչութեան բոլոր  
գոյքերու ցուցակը:

Քարտուղարի պարտականութիւններն են.

Ա. Գանձային խնդիրներէն զատ շրջաբերական,  
նամակ եւ այլն պատրաստել:

Բ. Եզիպտոսի Հայ Կ. Խաչի մասնաճիւղերուն մանրամասն անդամական ցանկը ունենալ, լրացընելով մասնաճիւղերէ ստացուած տեղեկագրերուն վրայ, և նշանակել հոն մահերը, հրաժարումները, տեղափոխումները, զաղրեցումները և արտաքսումները:

ԾԱՆՅՈՒԹ.— Քարտուղարը Կեդր. Վարչութեան անդամ չի կրնար ըլլալ, բայց կրնայ մասնակցիլ անոր ժողովներուն խորհրդակցական ձայնով:

Կեդր. Վարչութիւնը կրնայ քարտուղարին փոխանցել ասեմագրերի պարտականութեանց որոշ մասը կամ անոր վրայ դնել նոր պարտականութիւններ ըստ իր հայեցողութեան:

51.— Գանձապահին պարտականութիւններն են.

Ա. Քարտուղարութեանն ստանալ Կեդր. Վարչութեան անունով եկած բոլոր գումարները և ընկալագրերը զրկել Քարտուղարութեան միջոցով:

Բ. Դրամ յանձնել, զրկել և ծախքեր ընել Կեդր. Վարչութեան գրաստանը որոշումով վաւերացուած ատենագրերի և ատենագրերի ստորագրութիւններով:

Գ. Տոմարի մը մէջ կանոնաւորապէս և մանրամասնօրէն արձանագրել Կեդր. Վարչութեան ելեւմուտքը:

Դ. Իր կատարած վճարումներուն և ծախքերուն ընկալագրերն ու արդարացուցիչ վաւերաթուղթերը պահել իր քով:

Ե. Կեդր. Վարչութեան պարբերաբար ներկայացնել իր արկղին հաշիւը:

52.— Կեդր. Վարչութիւնը հաւաքաբար պատասխանատու է գանձապահին յանձնուած բոլոր

գումարներուն համար եւ հետեւաբար ազատ է գանձին ապահովութեան համար ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնները :

ԾԱՆՅԹ.— Ապահովութեան լաւագոյն միջոցն է գանձապահը եւ փարսուղարը դնել Երաթաւարութեան սակ, կամ Կեդր. Վարչութեանն որպէս երկու անձերու ստորագրութեամբ միայն կարելի լինի փոխարկուած ուեւ գումար հանել դրամասուցեմ :

53.— Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է իր բոլոր հաշիւները, ինչպէս նաև բոլոր գրութիւնները, Պատգմ. Ժողովին օրը բերել դէպք պատկան յանձնախումբերու տրամադրութեան տակ :

54.— Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է Պատգմ. Ժողովի գումարումէն երկու ամիս առաջ,

Ա. Հաղորդել բոլոր մասնաճիւղերուն Պատգմ. Ժողովի գումարման օրն ու տեղը :

Բ. Պահանջել մասնաճիւղերէ վեցամսեայ եւ իրենց տարեկան հաշուեկշիռները ու տեղեկագիրները :

Գ. Պահանջել, որ տուրքերու հաշուէն ապառիկ վճանեցող մասնաճիւղերը փութան իրենց հաշիւները փակել եւ դրամը հասցնել Կեդր. Վարչութեան :

#### ԿԱԶՄՍԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՅԱՆՅԱՆՔՆԵՐ

55.— Կազմակերպութեան դէմ յանցաւոր կը նկատուի այն ընկերուհին, որ.

Ա. Կ. Խաչի կարգապահութեան դէմ անսաստող ընթացք մը կը բռնէ :

Բ. Մասնաճիւղի մը ներքին գործերու մասին ուրիշներու կը խօսի:

Գ. Գոեհիկ կամ անպատշաճ լ'էլու մը կը դործածէ ժողովներու մէջ:

Դ. Դիտմամբ կը խանգարէ ժողովը կամ անպատշաճ վարմունք մը կ'ունենայ հոն:

Ե. Կեդր. Վարչութեան կամ Պատգ. ժողովի տեղեկութիւններն ու որոշումները, որոնք այդ մարմիններուն մէջ մնալ սահմանուած են, կը հաղորդէ այդ մարմիններէն դուրս գտնուող անդամներու:

Զ. Գիտակցաբար երեսի վրայ կը ձգէ կամ կը մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը:

Է. Կազմակերպութեան անունը չարաչար կը գործածէ դրամական շահու համար:

Ը. Հ. Կ. Խաչի պատկանող ոեւէ դումար կամ ինչք կ'իւրացնէ եւ կամ չարաչար կը գործածէ:

56. — Երբ մասնաճիւղ մը Կ. Խաչի վնասակար ընթացքի մը մէջ կը գտնուի, դատի կ'ենթարկուի Կեդր. Վարչութեան կողմէ, որ իրաւունք ունի այդ մասնաճիւղը դադրեցնելու մինչև Պատգ. ժողովի օրը:

57. — Պատգ. ժողովի որոշումով մասնաճիւղ մը կըրնայ լուծուած հռչակուիլ, եթէ հակառակ կը գործէ Կ. Խաչի կանոնադրին կամ ծրագրին, եթէ մինչեւ տարի մը անընդհատ անդամական ժողով չունենար կամ չի վճարեր իր տուրքերը:

58. — Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկը զեղծում կը գործէ, ընկերական ատեանի կը հրաւիրուի, որը կը կազմեն Կեդր. Վարչութեան բոլոր միւս անդամները, եւ մերձաւոր մասնաճիւղերու մէկ մէկ ներկայացուցիչները, հաւասար ձայ-

նով, Ատեան լիազօր է պաշտօնանկ ընելու ամբաստանուածը :

59.— Երբ կեդր. վարչութիւնը պարտադանց կամ պօրինի ընթացքի մը մէջ կը գտնուի, ամէն մասնաճիւղ բացատրութիւն կրնայ պահանջել :

### ԲՈՂՈՔ ՆԵՐԿՍՅԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՒ

#### Ե Ղ Ա Ն Ա Կ Ը

60.— Ամէն ըողոք՝ սեէ անդամի, անդամներու և կամ մարմնի գէժ՝ զբաւոր կերպով կը ներկայացուի պատկան մարմինի օրինաւոր ժողովին : Ներկայացուած ըողոքը ներկաներուն կէսէն մէկ աւելի քուէով նկատի կ'առնուի :

61.— Պատիժներ չորս կարգի են .

Ա. Յանդիմանութիւն :

Բ. Քուէէ դրկում .

Գ. Դրամական տուգանք .

Դ. Արտաքսում .

62.— Թեթև յանցանքներու համար ատենապետը ժողովի ընդհանուր կարծիքը առնելէ յետոյ՝ համապատասխան որոշում կը պահանջէ : Ծանր յանցանքներու համար ժողովի ընդհանուր կարծիքը լսելէ վերջ՝ ատենապետը կը պահանջէ որ, բաց քուէով ընտրուի 3-5 անդամ ունեցող դատական յանձնախումբ մը . (դատ. յանձնախումբի անդամները պէտք է ազատ ըլլան դատին հետ սեէ կապ ունենալէ) :

63.— Դատական յանձնախումբի յանձնուած դատը կը քննուի մասնաճիւղի ժողովէն դուրս եւ

արդիւնքը գրաւոր կերպով կը ներկայացուի յաջորդ ժողովին :

64.— Շահագրգռուող կողմերը ներկայ կ'ըլլան քննութեան՝ իրենց տեսակէտները պարզելու և, ի պահանջել հարկին, յանձնախումբին տալու հարկ եղած փաստերն ու տեղեկութիւնները: Յանձնախումբը երկու կողմերը, ինչպէս նաև վկաները լսելէ յետոյ, առանձին կուտայ իր վճիռը:

65.— Դատական յանձնախումբի վճիռները կ'անցնին մեծամասնութեան քուէով և կը վաւարացուին կամ կը մերժուին մասնաճիւղին կողմէն:

66.— Եթէ ամբաստանեալը կամ բողոքարկոն բացակայի (բանաւոր բացակայութիւնը գրաւոր կերպով և ժամանակին հասցնելու է պատկան մարմինին) դատական յանձնախումբը կը շարունակէ դատաւարութիւնը և կ'արձակէ իր վճիռը:

67.— Բեէ անգամ որ դատ. յանձնախումբին կողմէն կը հրաւիրուի վկայութիւն կամ տեղեկութիւն տալու, պարտաւոր է ներկայանալ ատեանին և դոհացում տալ եղած հարցապնդումին, հակառակ պարադոսին յանցաւոր կը նկատուի:

68.— Պատիժը (յանդիմանութիւն, քուէէ զըրկում, դրամական տուղանք և արտաքսում) գրաւոր կը պատրաստուի և ժամանաճիւղի ժողովին մէջ դատաւարտուած անդամին ներկայութեան կը կարդացուի. եթէ անգամը լսոյս տայ, որոշուած օրը ներկայանալէ և պատիժը լսելէ, կը զրկուի Կ. Սաչի անգամական իրաւունքներէն, մինչև որ օրինական պատիժին ենթարկուի:

ԲՈՂՈՔ ԴԱՏԱՎՃԻՌԻՆ ԴԷՄ

69.— Մասնաճիւղի մը դատավճիռին դէմ եղած բողոքը կ'ուղղուի Կեդր. Վարչութեան: Բոլոր բողոքները պէտք է ներկայացնել դատավճիռը հաղորդելու օրէն առ առաւելն ամիս մը ետք:

70.— Բողոքարկուն իր բողոքագիրը կ'ուղղէ մասնաճիւղին, որ այդ գրութիւնը դատին վերաբերեալ բոլոր թուղթերուն հետ կը ղրկէ Կեդր. Վարչութեան: Մասնաճիւղը պատասխանատուութեան կ'ենթարկուի, եթէ բողոքը ստանալէ ետք մինչև եօթ օր բոլոր վերոյիշեալ գրութիւնները չի յանձնէ պատկան մարմին: Մասնաճիւղին վճիռը պարտաորիչ է մինչև չբեկանուի Կեդր. Վարչութեանէն:

71.— Եթէ ուէ կազմ ուզէ բողոքել Կեդր. Վարչութեան վճիռին դէմ, պէտք է դիմէ Պատգ. Ժողին:

72.— Պատգ. Ժողովի դատական յանձնախումբին առջև կը հրաւիրուին երկու կողմերը այն ատեն միայն, եթէ բողոքագիրը պատճառաբանուած ըլլայ, թէ դատավարութեան մէջ անկանոնութիւն, քրտարիւն կամ աչառութիւն տեղի ունեցած է: Յանձնախումբին առջև նոր դատ տեղի չկրնար ունենալ, այլ կրնայ խօսուիլ ու վիճուիլ միմիայն բողոքի վերոյիշեալ կէտերը ապացուցանելու համար եւ ուրիշ ոչինչ:

73.— Դատ. յանձնախումբը իր եզրակացութիւնները կ'ենթարկէ Պատգ. Ժողովի վաւերացումին և կը յանձնարարէ հարկաւոր դատածը: Պատգ. Ժողովի որոշումը պաշտօնապէս կը հաղորդուի Կեդր.

Վարչութեան կողմէ պատկան մասնաճիւղին՝ իր գործադրութիւնն:

### ՎԵՐՍՆԱՍՏՈՒՄ

74.— Ուէ անգամ, որ մասնաճիւղէ մը հետոյ ուսած է ոչ-քանաւոր պատճառներով կամ իր տուրքերը չի վճարելուն համար, կրնայ նորէն ընդունուիլ, կանխիկ վճարելով իր բոլոր պարտքը, ապա թէ ոչ կը նկատուի նոր անգամ:

75.— Դատավճիռէ մը խուսափելու համար հրատարած անգամները չեն կրնար վերստին ընդունուիլ, մինչև չեն թարկուին իրենց մասին տրուած վճիռին:

76.— Մասնաճիւղը կրնայ, երբ՝ նոր վկայութեան մը, կամ մեղմացուցիչ պարագայի մը հանգէպ գտնուի, կամ ժամանակ անցնելէ ետք պաղրեցումի սեւտղութիւնը չափազանց համարէ, քուէներու երկու երրորդի առաւելութեամբ՝ դատապարտուած անգամը ներս ընդունիլ՝ լուր տալով կեցր. վարչութեան:

### ՊՍԿԿՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

77.— Եզիպտոսի Հ.Կ. Խաչի Պատգ. Ժողովը Հայ Կարմիր Խաչի օրէնսդրական, վարչական, դատական և ներկայացուցչական գերազոյն մարմինն է Եզիպտոսի մէջ և կը գումարուի պարբերաբար տարին անգամ մը:

78.— Արտակարգ Պատգ Ժողով կը գումարուի.

Ա. Երբ Կեզր. Վարչութիւնը արտակարգ և ստի-  
պողական գործի մը համար բոլոր մասնաճիւղերու  
խորհրդակցութիւնը և հաւաքական տնօրինութիւնը  
անհրաժեշտ կը գտնէ :

Բ. Երբ Մասնաճիւղերու կէսէն առ նուազն մէկ  
աւելի հարկ կը տեսնեն :

Գ. Երբ Կեզր. Վարչութիւնը կը կազմալուծուի :  
ԾԱՆՕՔ.— Կեզր. Վարչութեան առ նուազն չորս  
անդամներ կը պահուստեն Պատգ. Ժողովի հրաւե-  
րը :

79.— Պատգ. Ժողովը կ'ընտրէ պատգամաւորներ  
Հայ Կ. Սաչի Ընդհանուր Պատգամաւորական Ժողո-  
վին մասնակցելու՝ յանուն Եզիպտոսի Հայ Կարմիր  
Սաչին :

90.— Պատգ. Ժողովը կ'ունենայ այլևայլ յանձ-  
նախումբեր ըստ հարկին— Դատական, Հաշուեքըն-  
նիչ, Օրակարգի, Վերաքննիչ— որոնց գործելու ե-  
ղանակը ճշտուած է Պատգ. Ժողովի ներքին կանո-  
նագրութեամբ :

81.— Պատգ. Ժողովը կը ստանայ Կեզր. Վարչու-  
թեան համարատուութիւնը, և հնարաւոր տնօրի-  
նութիւնները կ'ընէ պարտազանց մարմիններու եւ  
պատասխանատու անդամներու նկատմամբ :

82.— Պատգ. Ժողովը կ'ընտրէ Կեզր. Վարչու-  
թիւնը, եռապատիկ ցանկի մը վրայէն, զազտի-  
քուէարկութեամբ և քուէներու մեծամասնու-  
թեամբ :

Քուէարկութենէն առաջ իւրաքանչիւր ընտրելիի  
մասին խորհրդակցութիւն կը կատարուի և կար-  
ծիքներ կը յայտնուին ընտրելիին բացակայութեա-  
նը :

83.— Պատգ. Ժողովին որոշումները պարտաւորիչ են բոլոր մասնաճիւղերուն համար:

84.— Պատգ. Ժողովին գէժ իւրաքանչիւր բողոք յաջորդ Պատգ. Ժողովին միայն կրնայ ներկայացուիլ:

85.— Ամէն մասնաճիւղ կը մասնակցի Պատգ. Ժողովին իր իրաւասու անգամներու թիւին համեմատութեամբ: Օրինական թուի վրայ իւրաքանչիւր 50 անգամի համար մէկ ձայնի յաւելում կ'ունենայ մասնաճիւղը: Այսպէս, հինգ անգամ ունեցող մասնաճիւղը՝ մէկ ձայն, 51—100 անգամ ունեցողը՝ 2 ձայն, 101—150 անգամ ունեցողը՝ 3 ձայն, եւ այլն:

86.— Իրաւասու են այն մասնաճիւղերը, որոնք վճարած են իրենց կազմակերպական տուրքին երեք չորբորդը և մէկ չորբորդին համար ալ մանրամասն տեղեկութիւններ կուտան կեդք. Վարչութեան՝ Պատգ. Ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ:

87.— Հեռաւոր այն մասնաճիւղերը, որ 51 կամ աւելի անգամներ ունին և այս կանոնագրի տրամադրութիւններուն դժացում կուտան, իրաւունք ունին զրկելու իրենց թիւին համաձայն պատգամաւորներ, պայմանաւ որ ծախսը 40 տոլարէն աւելի չըլլայ, հակառակ պարագային տեղի վրայ կ'ընեն բացառիկ կարգադրութիւն:

88.— Հեռաւոր մասնաճիւղերը կրնան Պատգ. Ժողովին ներկայացուցիչ նշանակիլ տարբեր վայրերէ, եթէ օրէ պատճառով իրենք չեն զրկեր պատգամաւոր:

ՄԱՆՕԹ.— Եթէ նշանակուած պատգամաւորը ուրիշ տեղէ մը արդէն ընտրուած է, օրէ կերպով չի կրնար ընտրելի ըլլալ, եւ Պատգ. Ժողովը իրաւունք ունի այդ ձայնը ուրիշ մը տալու:

89.— Պատգ. Ժողովին չեն կրնար մասնակցիլ այն մասնաճիւղերը, որոնք իրենց տարեկան տուրքը կանխաւ չեն վճարած :

Տուրքին մէկ մասը միայն վճարած մասնաճիւղերու պատգամաւորները կը մասնակցին Պատգ. Ժողովին՝ խորհրդակցական ձայնով :

90.— Այն նորակազմ մասնաճիւղերը, որոնց վաւերացումը Պատգ. Ժողովի գումարման օրէն գէթ երեք ամիս առաջ տեղի ունեցած չէ, չեն կրնար մասնակցիլ Պատգ. Ժողովին :

91.— Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն այն անդամները, որոնք առնուազն վեց ամիս իրաւասու անդամ եղած են և առնուազն երեք ամիս գտնուած են նոյն մասնաճիւղին մէջ :

12.— Իւրաքանչիւր պատգամաւոր միայն մէկ քուէ կրնայ ունենալ և մէկ մասնաճիւղ ներկայացնել : Բայց հեռաւոր մասնաճիւղերը, եթէ ծախքերը նկատի ունենալով չկրնան իրենց թուի համեմատութեամբ ներկայացուցիչ ղրկել, կրնան իրենց ձայնը տալ ուրիշի մը ուղղակի կամ Պատգ. Ժողովի միջոցաւ :

93.— Կեդր. վարչութիւնը հաւաքաբար մէկ քըռուէով կրնայ մասնակցիլ Պատգ. Ժողովին, այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն մէկուն :

Կեդր. վարչութեան միւս անդամները կրնան օգտուիլ ձայնի իրաւունքով միայն այն պարագային, երբ իրաւասու մասնաճիւղեր անոնց կուտան իրենց ձայնը :

94.— Կեդր. վարչութեան բոլոր անդամները ձեռնապահ կը մնան վարչութեան գործերու մասին քուէարկութիւն կատարուելու պարագային :

95.— Պատգամաւորներու մեծամասնութեան

ներկայութիւնը օրինական կը սեպուի Պատգ. Ժողովը բացուած յայտարարելու որոշուած օրը և որոշուած ժամուն :

96.— Պատգ. Ժողովը միայն կրնայ փոփոխութիւններ ընել այս կանոնադրին մէջ :

Սոյն կանոնադրի սեւէ յօդուածը փոփոխելու կամ ջնջելու մասին ամէն առաջարկ, ինչպէս նաեւ անուղղակի կերպով նոյն նպատակին ձգտող ամէն նոր առաջարկ, պատճառաբանութիւններով մէկտեղ կը ներկայացուի կեդրոնական Վարչութեան ամէնէն ուշ՝ Պատգ. Ժողովէն երեք ամիս առաջ, որպէսզի կեդր. Վարչութիւնը Պատգ. Ժողովին ներկայացուելիք հարցերուն ցանկին մէջ դնելով զանոնք, ներկայացնէ մասնաձեռնորդութեան քննութեան :

Առանց այս ձեւականութեան, ուղղակի Պատգ. Ժողովին բերուած կամ հոն յարուցուած այդպիսի առաջարկներ նկատի չեն առնուիր, այլ կը յանձնուին նորընտիր կեդր. Վարչութեան, որ յաջորդ Պատգ. Ժողովին ենթարկէ պատշաճ եղանակով :

### ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

97.— Եզրագրոսի Հայ Կ. Պաշտ լուծուած կը համարուի երբ ընդհանուր գործօն անդամներու թիւը երեսունի չի հասնիր :

Լուծման պարագային ընկերութեանս պատկանած դրամ, գոյք և ամէն ինչ կը ղրկուի :

Ա. Երկրի և անասնաբանի Հայ Կարմիր Պաշտութեան Ընդհանուր Պատգ. Ժողովներէ ընտրուած կեդրոնական Մարմնոյն :

Բ. Առաջնոյն չգոյութեան պարագային՝ Հայազգը ներկայացնող քաղաքական իշխանութեան կամ պետութեան :

Գ. Վերոյիշեալներու չգոյութեան պարագային՝ միայն Ամենայն Հայոց կաթողիկոսին :

Վ Ե Ր Զ

